

ԵՐԵՍՈՒՆ ՏՆՐԻ ԱՌԱՋ

ԼՈՋԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԺՈՂՈՎԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Մայր Աթոռը ուղղակի հրաւիր ստացած և Հաւաստի ու Կարգի հաստատողովի փառադարձութենէն, և Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի իր կողմէն Յանձնաժողով մը նշանակած և Լոզանի ժողովին մէջ Հայց. Եկեղեցին ներկայացնելու համար: Այդ Յանձնաժողովին անդամներ են Տիրայր Արքայան Ամերիկայի առաջնորդ, Ղեւոնդ Եպս. Գուրգեն Մանչեսթրի Հովիւ և Գրիգորիս Եպս. Պաշտօնաւի Կարողիկոսական Պատուիրակ Երուսաղիմ:

Մայր Աթոռոյ Գեր. Հոգեւոր Խորհուրդը, յանուն Ն. Ս. Օծուրեան Ամեն. Հայոց Վեհ. Հայրապետին, հետեւեալ պաշտօնագիրը ուղղած է Յանձնաժողովի անդամներուն. պաշտօնագիր մը, որ կը գծէ Յանձնաժողովին իրաւաստութեան սահմանը Լոզանի ժողովին մասնակցելու համար:

Պաշտօնագիրը գրուած է Գեր. Հոգեւոր Խորհուրդի Գիւնէն, և կը կրէ 451 թիւը և 4 Յունիս 1927 թուականը:

1926 թուի մայիսի 19ը թուականը The Secretariat of the World Conference on Faith and Order-ի հրաւերի հետեւանքով Նորին Վեհափառութեան (Տ. Տ. Գէորգ Ե.) Թ. . հայրապետական կոնդակով կարգուել է մի Բանձնաժողով՝ նախագահութեամբ Տ. Տիրայր Արքեպս. Ի անդամակցութեամբ Տ. Ղեւոնդ Եպս. Գուրգենի և Տ. Գրիգորիս Եպս. Պաշտօնաւի՝ առաջիկայ օգոստոսի 3-21ին Լոզանում գումարուելիք քրիստոնէական եկեղեցիների Համաժողովին ներկայանալու, իբրեւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչներ, ներկայացնելու Հայ Առաքելական հինաւուրց եկեղեցին:

Գեր. Հոգեւոր Խորհուրդը՝ Վեհափառ Հայրապետի ցանկութեան և պատուէրի համաձայն մշակել է այն սկզբունքները, որոնցմով պարտադրապէս պիտի ղեկավարուի վերոյիշեալ Բանձնաժողովը՝ յիշատակուած օգոստոսեան համագումարում. — որք են.

1. — Ողջունել համաքրիստոնէական Համագումարի բացումը, յայտնել Հայ Առաքելական հնադարեան ազգային եկեղեցւոյ սիրով մասնակցելը նրան, որ եկեղեցիները մերձեցման է ձգտում և ընդհանուր համագործակցութեամբ Քրիստոսի սիրոյ շնորհաշխարհը ջերմացնելու և նրա Աւետարանի յաւիտենական դադափարները կեանքի մէջ մարմնացնելու նպատակ է գրել՝ և դէպի այդ նպատակներն առաջնորդելու ուղիներ հարթելու հետամուտ է:

2. — Հայ եկեղեցին՝ իր պատմական անցեալում մշակած կանոնական իրաւունքի և սրբազորած աւանդութիւնների համաձայն իր կեանքի ամենատեսակ խնդիրների լուծման մէջ՝ վախճանական որոշումներ ընդունել է Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետի գլխաւորութեամբ գումարուած եկեղեցական ժողովով: Ուստի և ներկայ Համագումարում Հայ եկեղեցւոյ ներկայացուցչութիւնը իրաւունք չունի նրա վախճանական որոշումներին մասնակցելու և պարտադիր ճանաչելու այն Հայ եկեղեցւոյ համար: Այլ յանձնարարում է միայն խորհրդակցական մասնակցութիւն ունենալու և եղած բոլոր որոշումներն ու Համագումարի ամբողջական պատկերը ընդարձակ զեկոյցով մատուցանելու Վեհափառ Հայրապետին՝ յառաջիկայ եկեղեցական ժողովի խորհրդակցութեան և քննութեան ենթարկելու և նրա հեղինակաւոր որոշման համեմատ էլ յիշեալ Համաժողովի ապագայ գումարումների մէջ իր զիրքը որոշելու:

3. — Քրիստոնէական եկեղեցիների մերձեցման և համագործակցութեան նախադրեալ համարելով եկեղեցիների փոխադարձ ծանօթութիւնը, այլ և ի նկատի առնելով ներկայ Համաժողովի կատարելիք աշխատանքների ծրագիրը՝ յանձնարարում է Բանձնաժողովի, ըստ պահանջի հարկին, տալ Հայ եկեղեցւոյ դաւանական և ծիսական արարողական նկարագիրը, ուղեցոյց ունենալով Տիեզերական երեք ժողովները և Ներսէս Շնորհաւուրց «Ընդհանրական»ը:

(Սիոն, 1927 Սեպտեմբեր, էջ 282-283):